ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱՅԻ ՅԵՎ
ՄԵԽԱՆԻԶԱՑԻԱՅԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

Ագրոտեխնիկական խորհուրդներ № 2

# ՍԽՏԶ ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Հաստատված է ԽՍՀՄ Հողժողկոմատի յեվ ԽՍՀՄ խորհտնտժողկոմատի կողմից դեկտեմբերի 1-ին 1938 թ.

629.113
Ս-11

ՅԵՐԵՎԱՆ 1940

04 AUG 2010

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱՅԻ ՅԵՎ ՄԵԽԱՆԻԶԱՑԻԱՅԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

629.113
Մ-11
ագ.

Ագրոտեխնիկական խորհուրդներ № 2

# ՍԽՏՋ ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Հաստատված է ԽՍՀՄ Հողժողկոմատի յեվ ԽՍՀՄ Խորհտնտժողկոմատի կողմից դեկտեմբերի 1-ին 1938 թ.

## ՎՐԻՊԱԿՆԵՐ

| Եջ | Տող ներքեվից | Տպագրված է | Պետք է լինի |
|---|---|---|---|
| 12 | 11 | փականայի | փականային |
| 16 | 16 | բոլկի | բլոկի |
| 18 | 16 | եկտրոդլների | էլեկտրոդների |
| 20 | 1 | բո | որ |
| 20 | 11 | յուրաքանչյու ր 250 հեկտ. պայմանական վար կատարելուց հետո տեխ. խընամք № 5= ժամանակը 6 ժամ | յուրաքանչյուր 350 հեկտ. տեխխնամք № 3 ժամանակը= 3 ժամ |

ՅԵՐԵՎԱՆ 1940

04 AUG 2010

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՍՀ ՀՈՂԺՈՂԿՈՄԱՏԻ ԱԳՐՈՏԵԽՆԻԿԱՅԻ ՅԵՎ
ՄԵԽԱՆԻԶԱՑԻԱՅԻ ՎԱՐՉՈՒԹՅՈՒՆ

629.113
Մ-11
ԿՐ.

Ագրոտեխնիկական խորհուրդներ № 2

# ՄԽՏԶ ՏՐԱԿՏՈՐՆԵՐԻ ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՆԱՄՔԻ ԿԱՆՈՆՆԵՐԸ

Հաստատված է ԽՍՀՄ Հողժողկոմատի յեվ ԽՍՀՄ Խորհտնտժողկոմատի կողմից դեկտեմբերի 1-ին 1938 թ.

ՅԵՐԵՎԱՆ 1940

14.475

30 JUL 2013

ՀՍԽՀ-ССР
ИМ. А МЯСНИКЯНА
Ա. ՄՅԱՍՆԻԿՅԱՆԻ ԱՆՎԱՆ

2601
40

Պատ. խմբագիր՝ ինժ.-մեխ. Ռ. ՑԱՂՈՒԲՅԱՆ
Թարգմանեց՝ ինժ.-մեխանիկ Հ. ԲԵԶԻՐԳԱՆՅԱՆ
Տեխ. խմբ. Խ. ԽԱՉԱՏՐՅԱՆ
Սրբագրիչ՝ Կ. ՊԵՏՐՈՍՅԱՆ
Գլավլիտի լիազոր՝ Ա—2554. Պատվեր 224, տիրաժ 1300
Հանձնված է արտադրության 19 հունիսի 1940 թ.
Ստորագրված է տպագրության 25 հունիսի 1940 թ.

Մանկ. ինստիտուտի տպարան, Մարքսի փ. 17, Յերևան 1940

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՆԱՄՔ № 1

Անց է կացվում ամեն օր, առաջին հերթափոխի աշխատանքն սկսելուց առաջ.

1. Զննել և ընդունել տրակտորը, ստուգել գործիքները, զապրավկա անել տրակտորը վառելանյութով և ջրով։

Ստուգել արտաքին ամրվածքները՝ շարժիչը շրջանակին, մագնետոյի, վառելանյութի և ջրի բակերի, ղեկի սյունի, գործարկման բռնակի, ղեկի ձգանի, ռադիատորի, ոդափոխիչի, ոդազտիչի, առաջի սռնու գալձիակի և հենակային յեղանիկի, կիսասռնիների պատյանի, նստատեղի, խթանների (շպոռ) յուղաբըների և այլն։

Ստուգել ոդափոխիչի փոկի ձգվածությունը, ստուգել տրակտորի արգելակը և ճարմանդի ամրվածքը։

Կատարողներ. Տրակտորային բրիգադիր։ Տրակտորիստ, պրիցեպշչիկ, զապրավշչիկ։

2. Յուղել տրակտորը (ըստ սխեմայի); շարժիչի պատենատուփից յուղը պակասեցնել մինչև միջին ծորակը և ավելացնել թարմ յուղ մինչև վերին ծորակը։

Կատարողներ. Տրակտորիստ։ Զապրավշչիկ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ. — Համապատասխան հարմարանքի բացակայության դեպքում (յեթե իջուցիկ խցանի փոխարեն դրված է իջուցիկ ծորակ) յուղը պատենատուփից պակասեցնել մինչև միջին ծորակը, ներքին իջեցուկ անցքով։

3. Փոխել ոդազտիչի յուղը։ Ստուգել պատենատուփի արագատուփի դիֆերենցիալի իջեցուկ խցանները և յուղի կոնտրոլ ծորակները։ Ստուգել կցվող մեքենաների և կցիչի (սցեպկա) վիճակը։ Յուղել և կանոնավորել նրանց։

Կատարողներ. Տրակտորային բրիգադիր կամ մեխանիկ։
Տրակտորիստ։ Պրիցեպշչիկ։

4. Շարժիչը գործարկելուց հետո կանոնավորել և լսել։ Ստուգել մանոմետրի ցուցմունքն ու կատարել տրակտորի արտաքին զննում։

Կատարողներ. Տրակտորային բրիգադիր կամ մեխանիկ։ Տրակտորիստ։

## ԱՌԱՋԻՆ ՀԵՐԹԱՓՈԽԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿ (ԱԿՈՍՈՒՄ)

1. Ավելացնել ջուր ռադիատորում, ավելացնել վառելանյութ։ Ստուգել պատենատուփի յուղի մակարդակը և անհրաժեշտության դեպքում լրացնել։

Կատարողներ. Զապրավշչիկ։ Տրակտորիստ։

2. Ստուգել տրակտորի, կցիչի և կցվող գործիքների վիճակը, աշխատանքի ժամանակ (չկանգնեցնելով տրակտորի շարժիչը)։

Կատարողներ. Տրակտորային բրիգադիր կամ մեխանիկ։ Տրակտորիստ։ Պրիցեպշչիկ։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Տրակտորը յերրորդ արագությամբ աշխատելու դեպքում անհրաժեշտ է ամեն հերթափոխի աշխատանքի ժամանակ (աշխատանքի սկզբից յուրաքանչյուր 4—5 ժամում կատարել ստուգում և տրակտորի արտաքին ամրվածքների ձգում՝ շարժիչը շրջանային, ոդազտիչի, կարբյուրատորի, ռադիատորի, մագնետոյի, դինամոյի, կիսասռնիների պատյանի, ղեկի, խթանների, ռեսորների)։

№ 1 տեխ. խնամքի անցկացման օրինակելի ժամանակը

| | |
|---|---|
| Մինչև աշխատանքի սկիզբը . . . | 50 րոպե |
| Աշխատանքի ժամանակ . . . | 10 » |

Ժամանակի ծախսումն ըստ կատարողների

| | | |
|---|---|---|
| Տրակտորային բրիգադիր կամ մեխանիկ մինչև աշխատանքի սկիզբը . . . | 20 | րոպե |
| Յեվ աշխատանքի ժամանակ . . . | 10 | » |
| Տրակտորիստը մինչև աշխատանքի սկիզբը . | 50 | » |
| » աշխատանքի ժամանակ . | 10 | » |
| Պրիցեպշչիկը մինչև աշխատանքի սկիզբը . | 30 | » |
| » աշխատանքի ժամանակ . | 10 | » |
| Զապրավշչիկը մինչև աշխատանքի սկիզբը . | 20 | րոպե |
| » աշխատանքի ժամանակ . | 10 | » |



## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՆԱՄՔ № 2

Անց է կացվում ամեն օր միջհերթափոխային ընդմիջման յերկրորդ հերթափոխի աշխատանքի ընթացքում և աշխատանքի վերջում։

1. Ստուգել տրակտորը ակոսից դուրս գալիս։

Կատարողներ. Տրակտորային բրիգադիր կամ մեխանիկ։

2. Տրակտորը զապրավկա անել վառելանյութով և ջրով (առաջի հերթափոխի աշխատանքը վերջացնելիս, ակոսից դուրս գալիս)։

Կատարողներ. Առաջին հերթափոխի տրակտորիստը և զապրավշչիկը։

3. Տրակտորն արտաքինից մաքրել։ Կեղտից և յուղից մաքրել առանձին մեխանիզմները՝ մագնետոն, դինամոն, կարբյուրատորը և այլն։ Առաջին հերթափոխի տրակտորիստը զեկուցում է բրիգադիրին տրակտորի աշխատանքի և վիճակի մասին ու հանձնում է տրակտորը յերկրորդ հերթափոխի տրակտորիստին։

Կատարողներ. Տրակտորային բրիգադիր կամ մեխանիկ։ 1-ին և 2-րդ հերթափոխի տրակտորիստներ։ Պրիցեպշչիկ։

4. Ստուգել տրակտորի արտաքին ամրվածքները՝ շարժիչը շրջանակին, մագնետոն, ղեկի սյունը, գործարկման բռնակը, ռադիատորը, ոդազտիչը, կրնկակալը (պոդպյատնիկ), առաջի սռնու դարձյակը և հենակային յեղանիկը, կիսասռնու պատյանները, խթանները, առջևի անիվների սռնակները (ռեսորդա), ճարմանդը և այլն։ Ստուգել ոդափոխիչի փոկի ձգվածությունը և այլն։ Ստուգել տրակտորի արգելակը։

Կատարողներ. Տրակտորային բրիգադիր կամ մեխանիկ։ Յերկրորդ հերթափոխի տրակտորիստ։

5. Ստուգել առջևի անիվների առանցքակալների կանոնավորումը (առանց քանդելու) և առջևի սռնու մասի վիճակը։

Կատարողներ. Տրակտորային բրիգադիր և մեխանիկ։ Յերկրորդ հերթափոխի տրակտորիստ։

6. Ցուցել տրակտորը (սխեմայով), շարժիչի պատյանատուփի յուղը պակասեցնել մինչև միջին ծորակը և ավելացնել թարմ յուղ, մինչև վերին ծորակը։ Փոխել ռեգուլյատորի յուղը։ Ստուգել տրանսմիսիայի, դիֆերենցիալի, ռադիատորի իջուցիկ խցանները և յուղի կոնտրոլ ծորակները։

Կատարողներ. Երկրորդ հերթափոխի տրակտորիստ։ Զապրավշչիկ։

7. Ստուգել շարժանակային առանցքակալների բոլտերի շպլինտավորումը, փականների բացակները, կարբյուրատորի և ռեգուլյատորի միացման կիրառությունը։ Ստուգել և լվանալ վառելանյութի և ջրի ֆիլտրներն ու ռոստոյնիկները։ Ստուգել անման սիստեմի խողովակների միացումները (նիպելները)։ Ստուգել վառելանյութի մակարդակը բակերում։

Կատարողներ. Տրակտորային բրիգադիր կամ մեխանիկ։
Երկրորդ հերթափոխի տրակտորիստ։

8. Ստուգել կցվող մեքենաների վիճակը, յուղել և կանոնավորել նրանք։

Կատարողներ. Տրակտորային բրիգադիր կամ մեխանիկ, պրիցեպշչիկ։

9. Գործարկել շարժիչը, կարգավորել և լսել, ստուգել մանոմետրի ցուցմունքը և կատարել տրակտորի արտաքին զննում։

Կատարողներ. Տրակտորային բրիգադիր կամ մեխանիկ։
Երկրորդ հերթափոխի տրակտորիստ։

## ԵՐԿՐՈՐԴ ՀԵՐԹԱՓՈԽԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԺԱՄԱՆԱԿ

1. Ավելացնել ռադիատորի ջուրը, ավելացնել վառելանյութը, ստուգել պատյանատուփի յուղի մակարդակը և անհրաժեշտության դեպքում լրացնել։

Կատարողներ. Երկրորդ հերթափոխի տրակտորիստ։ Զապրավշչիկ։

2. Ստուգել տրակտորի և կցվող մեքենաների վիճակը, աշխատանքի ժամանակ (չկանգնեցնելով շարժիչի աշխատանքը)։

Կատարողներ. Տրակտորային բրիգադիր կամ մեխանիկ։ պրիցեպշչիկ։



## ԱՇԽԱՏԱՆՔԸ ՎԵՐՋԱՑՆԵԼՈՒՑ ՀԵՏՈ

Արտաքինից մաքրել տրակտորը։ Մաքրել կեղտից և յուղից, առանձին մեխանիզմները՝ մագնետոն, դինամոն, կարբյուրատորը և այլն։ Տրակտորիստը բրիգադիրին զեկուցում է տրակտորի վիճակը և աշխատանքի մասին, հերթափոխի ընթացքում։

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Ցրտաշատ կանգառների ժամանակ, երբ կարող է ջուրը սառել, անհրաժեշտ է ջուրը սառեցման սիստեմից դուրս թողնել, նույնը կատարել և ջրի բակի ու ջրի կարբյուրատորի վերաբերյալ։

№ 2 խնամքի անցկացման որինակելի ժամանակը

| | | |
|---|---|---|
| Միջհերթափոխային ընդմիջման . . . | 50 | րոպե |
| Աշխատանքի ժամանակ . . . . | 10 | » |
| Աշխատանքը վերջացնելուց հետո . . | 15 | » |

ժամանակի ծախսումն ըստ կատարողների

| | Միջհերթափոխության ընդմիջմանը | Աշխատանքի ժամանակ | Աշխատանքը վերջացնելուց հետո |
|---|---|---|---|
| Բրիգադիր կամ մեխանիկ | 30 րոպե | 10 րոպե | 5 րոպե |
| 1-ին հերթափոխի տրակտորիստ | 20 » | — | — |
| 2-րդ » » | 50 » | 10 » | 15 » |
| Պրիցեպշչիկ | 50 » | 10 » | 15 » |
| Զապրավշչիկ | 20 » | 10 » | — |

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՆԱՄՔ № 3

Անց է կացվում յուրաքանչյուր 22 հեկտար պայմանական վար կատարելուց հետո (միջհերթափոխային ընդմիջմանը).

1. Լսել տրակտորն ակոսից դուրս գալիս։

Կատարողներ. Տրակտորային բրիգադիր կամ մեխանիկ։

2. Առաջին հերթափոխի վերջում զապրավկա անել տրակտորը վառելանյութով և ջրով։

Կատարողներ. Առաջին հերթափոխի տրակտորիստ: Զապրավշչիկ:

3. Արտաքինից մաքրել տրակտորը կեղտից և յուղից: Մաքրել առանձին մեխանիզմները՝ մագնետոն, դինամոն, կարբյուրատորը և այլն: Առաջին հերթափոխի տրակտորիստը բրիգադիրին զեկուցում է տրակտորի վիճակը և աշխատանքի մասին, տրակտորը հանձնում է երկրորդ հերթափոխի տրակտորիստին: Ստուգել գործիքները: Պատենտատուփի յուղը դուրս թափել հատուկ ամանի մեջ (կատարել անմիջապես շարժիչը կանգնեցնելուց հետո):

Կատարողներ. Տրակտորային բրիգադիր կամ մեխանիկ: Առաջին հերթափոխի տրակտորիստ: Երկրորդ հերթափոխի տրակտորիստ: Պրիցեպշչիկ:

4. Լվանալ յուղ լցնելու անցքի ցանցը: Կերոսինով լվանալ պատենտատուփը (շպրիցով), պատենտատուփը թարմ յուղ լցնել: Յուղել տրակտորը համաձայն յուղման հրահանգի:

Լվանալ օդազտիչի ֆիլտրը և յուղ լցնել: Ստուգել բոլոր իջեցուկ խցանները:

Կատարողներ. Առաջին հերթափոխի տրակտորիստ: Երկրորդ հերթափոխի տրակտորիստ: Զապրավշչիկ:

5. Ստուգել տրակտորի արտաքին ամրացումները՝ շարժիչը շրջանակին, մագնետոն, ղեկի սյունը, գործարկման բռնակը, ղեկի ձգանը, ռադիատորը, օդազտիչը, կրնկակալը, առաջի սռնու հենակային յեղանիկը, կիսասռնիների պատյանը, խթանները, ռեսորները և այլն: Ստուգել ոդափոխիչի փոկի ձգվածությունը:

Կատարողներ. Տրակտորային բրիգադիր կամ մեխանիկ: Երկրորդ հերթափոխի տրակտորիստ:

6. Ստուգել օդազտիչի և կարբյուրատորի միացման կիպությունը: Զննել և լվանալ ֆիլտրները, վառելանյութի և ջրի ոտստոյնիկները, տրայնիկները և նման սիստեմի խողովակները:

Ստուգել վառելանյութի մակարդակը բակերում:

Կատարողներ. Առաջին հերթափոխի տրակտորիստ: Երկրորդ հերթափոխի տրակտորիստ:

7. Նյուկերից ստուգել շարժանակային առանցքակալների վիճակն ու շպլինտավորումը:



Կատարողներ. Տրակտորային բրիգադիր կամ մեխանիկ: Երկրորդ հերթափոխի տրակտորիստ:

8. Ստուգել փականների բացակների կանոնավորումը: Ստուգել փականների լծակների յուղումը (պատրույգներում):

Կատարողներ. Տրակտորային բրիգադիր կամ մեխանիկ: Առաջին հերթափոխի տրակտորիստ:

9. Ստուգել առջևի անիվների առանցքակալների կանոնավորումը (առանց քանդելու) և առջևի սռնու մասի վիճակը:

Կատարողներ. Տրակտորային բրիգադիր կամ մեխանիկ: Երկրորդ հերթափոխի տրակտորիստ:

10. Մաքրել և լվանալ կայծառները և անհրաժեշտության դեպքում կանոնավորել էլեկտրոդների բացակը, ստուգել կայծը: Ստուգել մագնետոյի և լուսավորման լարերի մեկուսացումը:

Կատարողներ. Տրակտորային բրիգադիր կամ մեխանիկ: Երկրորդ հերթափոխի տրակտորիստ:

11. Ստուգել նցվող մեքենաների վիճակը: Յուղել և կարգավորել նրանք:

Կատարողներ. Տրակտորային բրիգադիր կամ մեխանիկ: Պրիցեպշչիկ:

Գործարկել շարժիչը, կանոնավորել և լսել շարժիչը, ստուգել մանոմետրի ցուցմունքը և կատարել տրակտորի արտաքին զննում:

Կատարողներ. Տրակտորային բրիգադիր կամ մեխանիկ: Երկրորդ հերթափոխի տրակտորիստ:

№ 3 տեխնիկական խնամքի անցկացման որինակելի ժամանակը—1 ժամ 25 րոպե:

### Ժամանակի ծախսումը ըստ կատարողների

| | | |
|---|---|---|
| Տրակտորային բրիգադիր կամ մեխանիկ . . | 50 | րոպե |
| 1-ին հերթափոխի տրակտորիստ . . . | 60 | » |
| 2-րդ » » . . . . | 85 | » |
| Պրիցեպշչիկ . . . . . . . | 85 | » |
| Զապրավշչիկ . . . . . . | 25 | » |

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.—Յուրաքանչյուր հերթափոխի աշխատանքի ժամանակ և աշխատանքից հետո տեխնիկական խնամքի գործողու-

Ծյուղները կատարելու համար ծախսվելիք ժամանակը նայել № 1 և № 2 տեխնիկական խնամքում։

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՆԱՄՔ № 4

Անց է կացվում յուրաքանչյուր 45 հեկտար պայմանական վար կատարելուց հետո.

1. Լվալ տրակտորը։ Տրակտորիստը բրիգադիրին զեկուցում է տրակտորի աշխատանքի և վիճակի մասին։ Զննել տրակտորը և ստուգել գործիքները։ Տրակտորն արտաքինից լրիվ մաքրել։ Մաքրել կեղտից և յուղից առանձին մեխանիզմները՝ մագնետոն, կարբյուրատորը և այլն։ Իջեցնել յուղը շարժիչի պատենատուփից։

Կատարողներ. Տրակտորային բրիգադիր կամ մեխանիկ։
Առաջի հերթափոխի տրակտորիստ, պրիցեպշչիկ։

2. Անջատել ղեկավարման լայնակի ձողը և պատենատուփի կափարիչը, յուղի պոմպը և յուղատար խողովակները։ Զննել արմատական առանցքակալները, ստուգել և ձգել շարժանակային առանցքակալները, ստուգելով պահանդները, բաբիտի վիճակը և առանցքակալների բոլտերի վիճակը։ Պատենատուփը կերոսինով լվանալ, յուղ լցնելու անցքի ցանցը, յուղի պոմպի ֆիլտրը և յուղատար խողովակները, պատենատուփի կափարիչը և արտաքին սապունը (փնչիչը)։

Կատարողներ. Տրակտորային բրիգադիր կամ նորոգող փականագործ։ Առաջին հերթափոխի տրակտորիստ։ Երկրորդ հերթափոխի տրակտորիստ։

3. Ստուգել տրակտորի արտաքին ամրվածքը։ Շարժիչը հրջանակին, մագնետոն, ղեկի սյունը, գործարկման բռնակը, ղեկի ձգանները, ռադիատորը, օդազտիչը, կրնկակալը, առջևի սռնու հենակային ճողանիկը, կիսասռնիների պատյանները, խթանները, առջևի անիվների սկավառակները և այլն։ Ստուգել օդափոխիչի փոկի ձգվածությունը։

Կատարողներ. Տրակտորային բրիգադիր կամ մեխանիկ։
Երկրորդ հերթափոխի տրակտորիստ։

4. Լվանալ առջևի անիվների առանցքակալները, կանոնավորել և յուղել։



Կատարողներ. Երկրորդ հերթափոխի տրակտորիստ։ Պրիցեպշչիկ։

5. Մաքրել և լվանալ կայծառները և կանոնավորել էլեկտրոդների բացակը, ստուգել կայծը։ Ստուգել մագնետոյի և լուսավորման լարերի մեկուսացումը։ Ստուգել և կանոնավորել ընդհատիչի կոնտակտները և մաքրել բաշխիչը։

Կատարողներ. Տրակտորային բրիգադիր կամ մեխանիկ։
Երկրորդ հերթափոխի տրակտորիստ։

6. Կանոնավորել փականների բացակը։ Ստուգել փականային լծակների յուղումը (պատրույգներում)։

Կատարողներ. Տրակտորային բրիգադիր կամ մեխանիկ։
Երկրորդ հերթափոխի տրակտորիստ։

7. Պատենատուփը լցնել թարմ յուղ, կատարել տրակտորի և առանձին մեխանիզմների լրիվ յուղում համաձայն հրահանգի։ Լվանալ օդազտիչի ֆիլտրը և օդազտիչը պատրաստ անել յուղով։ Ստուգել բոլոր իջուցիկ խցանները և յուղի կոնտրոլ ծորակները։ Ստուգել յուղի մակարդակը տրանսմիսիայում։

Կատարողներ. Երկրորդ հերթափոխի տրակտորիստ։ Զապրավշչիկ։

8. Ստուգել կցվող մեքենաների վիճակը, յուղել և կանոնավորել նրանք։

Կատարողներ. Տրակտորային բրիգադիր կամ մեխանիկ։
Երկրորդ հերթափոխի տրակտորիստ։ Պրիցեպշչիկ։

9. Գործարկել շարժիչը շարժանակային առանցքակալների խրակման համար, կանոնավորել և լսել այն, ստուգել մանոմետրի ցուցմունքը և կատարել տրակտորի արտաքին զննում։

Կատարողներ. Տրակտորային բրիգադիր կամ մեխանիկ։
Երկրորդ հերթափոխի տրակտորիստ։

10. Կանգնեցնել շարժիչը և ստուգել շարժանակային առանցքակալները։

Կատարողներ. Տրակտորային բրիգադիր։ Երկրորդ հերթափոխի տրակտորիստ։

11. Գործարկել շարժիչը։

Կատարողներ. Երկրորդ հերթափոխի տրակտորիստ։

№ 4 տեխնիկական խնամքի անցկացման որինակելի ժամանակը—3 ժամ։

Ժամանակի ծախսումն ըստ կատարողների

| | |
|---|---|
| Մեխանիկ կամ տրակտորային բրիգադիր . . | 30 րոպե |
| Նորոգող փականագործ կամ տրակտորային բրիգադիր . . . . . . . | 180 » |
| 1-ին հերթափոխի տրակտորիստ . . . | 100 » |
| 2-րդ » » . . . | 180 » |
| Գրիցեպշչիկ . . . . . . . | 90 » |
| Զապրավշչիկ . . . . . . . | 15 » |

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՆԱՄՔ № 5

Այն է կատարվում փակ շենքում յուրաքանչյուր 130 հեկտար պայմանական վար կատարելուց հետո։

1. Լվալ տրակտորը։ Տրակտորիստը բրիգադիրին զեկուցում է տրակտորի աշխատանքի և վիճակի մասին։ Զննել տրակտորը և ստուգել գործիքները։

Կատարողներ. Տրակտորային բրիգադիր կամ մեխանիկ։ 1-ին և 2-րդ հերթափոխի տրակտորիստներ։

2. Կատարել տրակտորի լրիվ մաքրում, կեղտից և յուղից։ Դատարկել յուղը պատեհատուփից և ջուրը ռադիատորից (աշխատած յուղը հավաքել հատուկ ամանի մեջ)։

Կատարողներ. 1-ին հերթափոխի տրակտորիստ։ Գրիցեպշչիկ։ Զապրավշչիկ։

3. Քանդել շարժիչը՝ անջատել կապոտը, փականների կափարիչը, փականային մեխանիզմը, կարբյուրատորը, ներարկման և արտարկման խողովակը, գլանների գլխիկը, ղեկի լայնակի ձգանը և շարժիչի պատեհատուփի կափարիչը, հանել ջրի և վառելանյութի բաքերը։ Հանել արտաքին և ներքին սապոնները և լվանալ կեղտից։ Մաքրել և լվանալ մասերը։

Կատարողներ. Տրակտորային բրիգադիր կամ փականագործ։ 1-ին և 2-րդ հերթափոխի տրակտորիստներ։ Գրիցեպշչիկ։

4. Մաքրել և լվանալ գլանների գլխիկը։ Շպարել (պրիտիրկա) խփանները (ստուգումով)։ Զննել բլոկի գլխիկի միջդիրը։

Կատարողներ։ Տրակտորային բրիգադիր կամ Նորոգման փականագործ։ 1-ին հերթափոխի տրակտորիստ։



5. Հանել յուղի պոմպը և յուղատար խողովակները։ Քանդել շպլինտները և հանել շարժանակային բոլտերի պնդողակները և մխոցները։

Կատարողներ. Տրակտորային բրիգադիր կամ փականագործ։ 2-րդ հերթափոխի տրակտորիստ։

6. Մաքրել մխոցներն ու առվակներն այրուքից (նագար)։ Լվանալ մխոցները, զննել շարժանակի և մխոցի միացումը (առանց քանդելու)։ Մաքրել յուղի առվակները և պահանդների առացարանները բաբբիտե բերվածքներից։

Կատարողներ. Տրակտորային բրիգադիր կամ նորոգող փականագործ։ 2-րդ հերթափոխի տրակտորիստ։ Գրիցեպշչիկ։

7. Փոխել վերևի կոմպրեսիոն և յուղի օղակները։ Ստուգել մնացած օղակները։

Կատարողներ. Տրակտորային բրիգադիր կամ նորոգող փականագործ։ 2-րդ հերթափոխի տրակտորիստ։

8. Ստուգել արմատական առանցքակալների վիճակը։ Մխոցները տեղադրել գլանների մեջ։ Կանոնավորել շարժանակային առանցքակալները։ Ձգել և շպլինտավորել շարժանակային բոլտերը։ Լվանալ և տեղադրել յուղատար խողովակներն ու պոմպը։

Կատարողներ. Տրակտորային բրիգադիր կամ նորոգող փականագործ։ 2-րդ հերթափոխի տրակտորիստ։

9. Տեղադրել փականները։ Տեղադրել գլխիկը բլոկի վրա և ձգել պնդողակները։

Կատարողներ. Տրակտորային բրիգադիր կամ նորոգող փականագործ։ 1-ին հերթափոխի տրակտորիստ։

10. Տեղադրել փականային լծակները, ստուգել պատրույգները (ֆիտել) և կանոնավորել փականների բացակները։

Կատարողներ. Տրակտորային բրիգադիր կամ նորոգող փականագործ։ 1-ին հերթափոխի տրակտորիստ։

11. Լվանալ և տեղադրել պատեհատուփի կափարիչը, տեղադրել հենակային յեղանիկը։

Կատարողներ. 1-ին հերթափոխի տրակտորիստ։ Գրիցեպշչիկ։

12. Մաքրել կարբյուրատորը, ստուգել լողանները, առեղնաձևել փականը, չափավորված անցքերը, տրայնիկներն ու վառելանյութի և ջրի սնման սիստեմի խողովակները։

Կատարողներ. Տրակտորային բրիգադիր կամ մեխանիկ։ 2-րդ հերթափոխի տրակտորիստ։

13. Լվանալ, զննել և տեղադրել բաքերը, ռադիատորները և սնման խողովակները։

Կատարողներ. 1-ին հերթափոխի տրակտորիստ։ Պրիցեպշչիկ։

14. Ստուգել դրոսելային կափարիչի, ծխնիների և ձգանի աշխատանքը։

Կատարողներ. Տրակտորային բրիգադիր կամ նորոգող փականագործ։

15. Զննել միացքը և ստուգել նրա հենակային առանցքակալի յուղումը։

Կատարողներ. Տրակտորային բրիգադիր կամ նորոգող փականագործ։ 1-ին և 2-րդ հերթափոխի տրակտորիստներ։

16. Տեղադրել ներարկման և արտարկման խողովակները ու կարբյուրատորը։ Տեղադրել կապոտը։

Կատարողներ. Տրակտորային բրիգադիր կամ նորոգող փականագործ։ 1-ին և 2-րդ հերթափոխի տրակտորիստներ։

17. Զննել, լվանալ, կանոնավորել և յուղել առջևի անիվների առանցքակալները։

Կատարողներ. Տրակտորային բրիգադիր կամ նորոգող փականագործ։ 1-ին և 2-րդ հերթափոխի տրակտորիստներ։

18. Ստուգել և մաքրել մագնետոյի կոնտակտները և կանոնավորել բացակը, մաքրել բաշխիչը։ Մաքրել և լվանալ կայծառները, կանոնավորել էլեկտրոդների բացակը և ստուգել կայծը։ Մաքրել դինամոյի կոլեկտորը։

Զննել փարերն ու լուսավորության լարերի մեկուսացումը։

Կատարողներ. Մեխանիկ կամ տրակտորային բրիգադիր։ 1-ին հերթափոխի տրակտորիստը։

19. Ստուգել տրակտորի արտաքին ամրվածքները։

Կատարողներ. Մեխանիկ կամ տրակտորային բրիգադիր։ 1-ին հերթափոխի տրակտորիստ։

20. Կատարել տրակտորի լրիվ յուղում ըստ հրահանգի։ Ստուգել տրանսմիսիայի յուղի մակարդակը, անհրաժեշտության դեպքում ավելացնել։ Լվանալ օդազտիչի ֆիլտրը և օդազտիչը յուղ լցնել։ Լվանալ յուղ լցնելու անցքի ցանցը և շարժիչի պատնտուսը յուղ լցնել։ Շարժիչը զալյավկա անել վառելանյութով և ջրով։



Կատարողներ. Տրակտորային բրիգադիր կամ մեխանիկ։ 1-ին և 2-րդ հերթափոխերի տրակտորիստներ։ Ջարպավշչիկ։

21. Ստուգել կցվող մեքենաների վիճակը, յուղել և կարգավորել նրանք։

Կատարողներ. Տրակտորային բրիգադիր կամ մեխանիկ։ 1-ին հերթափոխի տրակտորիստ։ Պրիցեպշչիկ։

22. Գործարկել շարժիչը շարժանակային առանցքակալները իրարվելու համար։ Կանոնավորել և լսել շարժիչն ու ստուգել մանոմետրի ցուցմունքը։

Ստուգել տրակտորի գործիքների անհատական կոմպլեկտը։

Կատարողներ. Մեխանիկ։ Տրակտորային բրիգադիր կամ նորոգման փականագործ։ 2-րդ հերթափոխի տրակտորիստ։

12. Կանգնեցնել շարժիչը, ստուգել շարժանակային առանցքակալները։

Կատարողներ. Մեխանիկ։ Տրակտորային բրիգադիր։ 2-րդ հերթափոխի տրակտորիստ։

24. Գործարկել շարժիչը և ստուգել ծնկաձև լիսեռի պտույտների թիվը, կարգավորել կարգավորիչը (ռեգուլյատորը)։

Կատարողներ. Մեխանիկ կամ տրակտորային բրիգադիր։ 2-րդ հերթափոխի տրակտորիստ։

№ 5 տեխնիկական խնամքի անցկացման օրինակելի ժամանակ—6 ժամ.

Ժամանակի ծախսումն ըստ կատարողների՝

| | | |
|---|---|---|
| Մեխանիկ | 50 | րոպե |
| Տրակտորային բրիգադիր կամ փականագործ | 360 | » |
| 1-ին հերթափոխի տրակտորիստ | 360 | » |
| 2-րդ հերթափոխի տրակտորիստ | 360 | » |
| Պրիցեպշչիկ | 180 | » |
| Ջարպավշչիկ | 35 | » |

## ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԽՆԱՄՔ № 6

Անց է կացվում փակ շենքում, յուրաքանչյուր 265 հեկտար պայմանական վար կատարելուց հետո։

1. Ստուգման սխեմայից հեռացնել կաթսաքարը (նակիպ), կատարվում է նախքան տրակտորը № 6 տեխնամքի կանգնեցնելը։

2. Տրակտորը ցեխից և յուղից լրիվ մաքրել։ Շարժիչի պատյանատուփից յուղը դուրս թափել (բանաշխատ յուղը հավաքել հատուկ ամանի մեջ)։

Կատարողներ. *Առաջին հերթափոխի տրակտորիստ։ Պրիցեպշչիկ։*

3. Պատրաստել գործիք, պահեստի մասեր և նյութեր։

Կատարողներ. *Մեխանիկ։ Նորոգող փականագործ։*

4. Քանդել շարժիչը՝ անջատել կապոտը, փականների կափարիչը, փականային մեխանիզմը, կարբյուրատորը, ներարկման և արտարկման խողովակները, ռադիատորը, մագնետոն, դինամոն, հանել և քանդել գլանների գլխիկը և օդափոխիչը, հանել դեկի լայնակի ձգանը և շարժիչի պատյանատուփի կափարիչը, հանել ջրի և վառելանյութի բակերը։ Մաքրել և լվանալ մասերը։

Կատարողներ. *Մեխանիկ։ Նորոգող փականագործ։ 1-ին և 2-րդ հերթափոխի տրակտորիստներ։ Պրիցեպշչիկ։*

5. Մաքրել և լվանալ բլոկի գլխիկը և փականները։

Կատարողներ. *2-րդ հերթափոխի տրակտորիստ։ Պրիցեպշչիկ։*

6. Հղկել փականների յերեսակները (շլիֆովկա), ֆրեզել փականների բնիկները (կարեվորության դեպքում) և շպարել (պրիտիրկա) փականները (ստուգումով)։ Ջնջել բլոկի գլխիկի միջդերները։

Կատարողներ—*Մեխանիկ։ Նորոգող փականագործ։ 2-րդ հերթափոխի տրակտորիստ։*

7. Հանել և լվանալ յուղի պոմպը և յուղի խողովակները։ Քանդել շլինդները և հանել շարժանակային բոլտերի պնդողակները, հանել մխոցները։

Կատարողներ. *Մեխանիկ։ Նորոգող փականագործ։ 1-ին հերթափոխի տրակտորիստ։*

8. Ստուգել միացքի վիճակը և կարգավորել լծակների և հենակային առանցքակալի ողի միջև յեղած բացակը։ Ստուգել ծկան շլանգի (դիսկի) վիճակը։



Կատարողներ. *Մեխանիկ կամ տրակտորային բրիգադիր։ 2-րդ հերթափոխի տրակտորիստ։*

9. Քանդել, մաքրել և լվանալ մխոցային խմբի մասերը, փոխել (նախօրոք խառատելով ավիկները) կոմպրեսիոն և յուղի օղակները, անհրաժեշտության դեպքում փոխել մատները։ Հավաքել մխոցները։ Շարժանակային պահունակների յուղի ավիկները և սառցարանները բաբբիտի բերուկից մաքրել։ Լվանալ ներքին և արտաքին սապոնների լցվածքները։ Լվանալ շարժիչի պատյանատուփի կափարիչը։

Կատարողներ. *Մեխանիկ։ Նորոգող փականագործ։ 1-ին հերթափոխի տրակտորիստ։ Պրիցեպշչիկ։*

10. Ստուգել ծնկաձև լիսեռի վզիկները, էլլիպսի նկատմամբ։ Սաօ գել արմատական առանցքակալների վիճակը։

Կատարողներ. *Մեխանիկ։*

11. Տեղադրել մխոցները գլաններում, կանոնավորել շարժանակային առանցքակալները։ Ձգել և շպլինտավորել շարժանակային բոլտերը։ Տեղադրել յուղատար խողովակները, յուղի պոմպը և շարժիչի պատյանատուփի կափարիչը։

Կատարողներ. *Մեխանիկ։ Նորոգող փականագործ։ 2-րդ հերթափոխի տրակտորիստ։*

12. Հավաքել օդափոխիչը և անհրաժեշտության դեպքում փակը փոխել։ Տեղադրել օդափոխիչը։

Կատարողներ. *Նորոգող փականագործ։*

13. Մաքրել կարբյուրատորը և յուղատար խողովակները, ստուգել լողանները, ասեղնաձև փականները, չափավորված անցքերը, տրայնիկները, ջրի ու վառելանյութի սնման սիստեմի խողովակները։

Կատարողներ. *Մեխանիկ։ 1-ին հերթափոխի տրակտորիստ։*

14. Քանդել, մաքրել և լվանալ կարգավորիչը, ստուգել բռնիկները և զսպանակների վիճակը, հավաքել և տեղադրել կարգավորիչը։

Կատարողներ. *Մեխանիկ։ 1-ին հերթափոխի տրակտորիստ։*

15. Տեղադրել ռադիատորը։

Կատարողներ. *1-ին և 2-րդ հերթափոխի տրակտորիստներ։*

16. Փականները տեղադրել գլխիկում։ Գլխիկը դնել բլոկի վրա և ձգել պնդողակները։

ՊԵՏ. ՀԱՆՐԱՅԻՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Публ. Библ.
ՀՍԽՀ-ССР А.
им. А. Мясникяна

Կատարողներ. Մեխանիկ՝ 1-ին և 2-րդ հերթափոխի տրակտորիստներ

17. Տեղադրել փականային լծակները, լվանալ և ստուգել պատրույգները։ Կանոնավորել փականների բացակները։

Կատարողներ. Մեխանիկ՝ 1-ին հերթափոխի տրակտորիստ։

18. Տեղադրել փականային կափարիչը, ներարկման և արտարկման խողովակները և կարբյուրատորը։

Կատարողներ. Մեխանիկ՝ 2-րդ հերթափոխի տրակտորիստներ։

19. Լվանալ ջրի և վառելանյութի բակերը, սնման խողովակները, ոտստոյնիկները և ստուգել յուղի մանոմետրը։

Կատարողներ. Մեխանիկ՝ 1-ին հերթափոխի տրակտորիստ։

20. Ստուգել դրոսելային կափարիչը, ծխնիները և ձգանի գործելը։

Կատարողներ. Մեխանիկ։

21. Զննել, լվանալ և կանոնավորել առջևի անիվների առանցքակալները և յուղել նրանք։

Կատարողներ. Մեխանիկ՝ Առաջին հերթափոխի տրակտորիստ։
Պրիցեպշչիկ։

22. Մաքրել և կարգավորել ընդհատիչի կոնտակտներն ու մագնիտայի բաշխիչը։ Տեղադրել մագնիտոն։ Մաքրել և լվանալ կայծառները, կարգավորել էլեկտրոդների բացակը և ստուգել կայծը։ Ստուգել լարերի մեկուսացումը։

Կատարողներ. Մեխանիկ՝ 1-ին հերթափոխի տրակտորիստ։

23. Մաքրել և ստուգել դինամոն։ Ստուգել կոլեկտորի վիճակը և մաքրել նրան։ Ստուգել խոզանակների քսելը կոլեկտորին։ Ստուգել առանցքակալների վիճակը։ Տեղադրել դինամոն։ Ստուգել էլեկտրոլուսավորման լարերը և ֆարերը։

Կատարողներ. Մեխանիկ՝ 1-ին հերթափոխի տրակտորիստ։

24. Ստուգել արագության տուփը, հետին կամրջակը, ստուգել կիսասռնիների առանցքակալները և ձգել դիֆերենցիալի բոլտերը։

Կատարողներ. Մեխանիկ՝ 1-ին և 2-րդ հերթափոխի տրակտորիստներ։

25. Ստուգել և կարգավորել ղեկի վարդնակային սիստեմը և կարգավորել ձգանները։

Կատարողներ. Մեխանիկ՝ 1-ին հերթափոխի տրակտորիստ։



26. Տեղադրել վառելանյութի և ջրի բակերը, փականային կափարիչը և կապոտը։

Կատարողներ. 2-րդ հերթափոխի տրակտորիստ։ Պրիցեպշչիկ։

27. Ստուգել տրակտորի բոլոր ամրվածքները։

Կատարողներ. Մեխանիկ՝ 1-ին և 2-րդ հերթափոխի տրակտորիստներ։

28. Տրակտորը լրիվ յուղել (հրահանգով) տրանսմիսիայի յուղի փոխումով։ Լվանալ օդազտիչի ֆիլտրը և օդազտիչը յուղով զապրավկա անել։ Լվանալ յուղի լցնելու անցքի ցանցը և շարժիչի պատենատուփը յուղ լցնել։ Տրակտորը վառելանյութով և ջրով զապրավկա անել։

Կատարողներ. 1-ին և 2-րդ հերթափոխի տրակտորիստներ։
Պրիցեպշչիկ, զապրավշչիկ։

29. Գործարկել շարժիչը շարժանակային առանցքակալները խրարկելու համար։ Լսել և կարգավորել շարժիչը։ Ստուգել մանոմետրի ցուցմունքը։

Կատարողներ. Մեխանիկ՝ 1-ին և 2-րդ հերթափոխի տրակտորիստներ։

30. Կանգնեցնել շարժիչը և ստուգել շարժանակային առանցքակալները։

Կատարողներ. Մեխանիկ՝ 2-րդ հերթափոխի տրակտորիստ։

31. Գործարկել շարժիչը և ստուգել ծնկաձև լիսեռի պտույտների թիվը։ Կարգավորել կարգավորիչը։

Կատարողներ. Մեխանիկ՝ 2-րդ հերթափոխի տրակտորիստ։

№ 6 տեխնիկական խնամքի անցկացման օրինակելի ժամանակը—8 ժ.

Ժամանակի ծախսումն ըստ կատարողների՝

| | |
|---|---|
| Մեխանիկ . . . . . . . . . | 300 րոպե |
| Նորոգող փականագործ . . . . . . | 480 » |
| 1-ին հերթափոխի տրակտորիստ . . . . | 480 » |
| 2-րդ » » . . . . . . | 480 » |
| Պրիցեպշչիկ . . . . . . . . | 180 » |
| Զապրավշչիկ . . . . . . . . | 35 » |

ԾԱՆՈԹՈՒԹՅՈՒՆ.— Տրակտորի հանձնումը № 6 տեխխնամքի անցկացնելու համար կատարում է տրակտորային բրիգադի բրիգադիրը կամ մեխանիկը։ Հանձնման ժամանակ տրակտորը զննվում և լսվում է ավտոշրջիկ արհեստանոցի մեխանիկի կամ բաժանմունքի մեխանիկի կողմից։

ՄՏԿայանում, № 6 տեխխնամքից հետո ընդունումը կատարում է տրակտորային բրիգադի բրիգադիրը տրակտորիստի հետ միասին, իսկ ԽՏՖԿ. խորհտնտեսություններում մեխանիկը և տրակտորիստը։

## Տեխնիկական խնամքի անցկացման հաճախականությունը

| Աշխատանքը պայմանական վարի հեկտարներով նոր տրակտորների օգտագործման սկզբից կամ կապիտալ նորոգումից դուրս յեկած ժամանակաշրջանից | Տեխնիկական խնամքի №-ը | Տեխնիկական խնամքի անցկացման որինակելի ժամանակը |
|---|---|---|
| Ամեն որ աշխատանքի սկզբին և առաջին հերթափոխի աշխատանքի ժամանակ | 1* | 1 ժ. 00 ր. |
| Ամեն որ միջհերթափոխային թյուննների ընդմիջման, յերկրորդ հերթափոխի ժամանակ և 2-րդ հերթափոխի աշխատանքի վերջում. | 2* | 1 ժ. 15 ր. |
| Յուրաքանչյուր 22 հ. պայմանական վար կատարելուց հետո . . . . | 3 | 1 » 25 ր. |
| » 45 » » | 4 | 3 » — |
| » 65 » » | 3 | 1 » 25 » |
| » 90 » » | 4 | 3 » — |
| » 110 » » | 3 | 1 » 25 » |
| » 130 » » | 5 | 6 » — |
| » 155 » » | 3 | 1 » 25 » |
| » 175 » » | 4 | 3 » — » |
| » 200 » » | 3 | 1 » 25 |
| » 220 » » | 4 | 3 » — |
| » 240 » » | 3 | 1 » 25 » |
| » 265 » » | 6 | 8 » — |
| » 285 » » | 3 | 1 » 25 » |
| » 310 » » | 4 | 3 » — |
| » 330 » » | 3 | 1 » 25 » |
| » 250 » » | 5 | 6 » — |
| » 375 » » | 3 | 1 » 25 » |
| » 395 » » | 5 | 6 » — |
| » 420 » » | 3 | 1 » 25 » |
| » 440 » » | 4 | 3 » — |
| » 460 » » | 3 | 1 » 25 » |
| » 485 » » | 4 | 3 » 00 » |
| » 505 » » | 3 | 1 » 25 » |
| » 520 » » | — | Ընթացիկ նորոգում |

* 1-ին և 2-րդ տեխնիկական խնամքը անցկացվում է ամեն մի տրակտորի աշխատանքի ամբողջ ժամանակաշրջանում։

ССРА 2401

ՀՀ Ազգային գրադարան
NL0288069

14.475